# ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ.

## *Ամուսնութիւն.*

*Ախալքալաքի գաւառում միջին թւով տարեկան ամուսնանում են* 521 *զոյգ, որ հասակի համեմատ հետեւեալ կերպով են դասաւորւում.*

| | Արական. | Իգական. |
|---|---|---|
| 12—15 տարեկան. | ,, | 15 |
| 15—20 | 124 | 343 |
| 20—25 | 176 | 111 |
| 25—30 | 155 | 20 |
| 30—35 | 43 | 15 |
| 35—40 | 10 | 7 |
| 40—45 | 7 | 6 |
| 45—50 | 3 | 3 |
| 50—55 | 3 | 1 |
| | 521 | 521 |

*Սրանից հետեւում է, որ ամուսնացողներն ըստ հասակի կազմում են հետեւեալ %.*

| | Արական. | Իգական. |
|---|---|---|
| 15—20 տարեկան. | 23,8 | 65,8 |
| 20—25 | 33,8 | 21,3 |
| 25—30 | 29,8 | 4, |

*Ըստ ազգութիւնների, ամուսնացողների թիւն դասակարգելու համար, մենք գտանք միայն Նադեժդինի հետեւեալ,* 1876—1880 *թուականների ամուսնութիւնների աղիւսակը.*

| | մինչև 20 տարեկ. | 20—40 | 40—60 | բոլորը. |
|---|---|---|---|---|
| Հայեր | 1274 | 310 | 23 | 1607 |
| Վրացիներ | 87 | 49 | 1 | 137 |
| Մահմեդականներ | 162 | 76 | 6 | 244 |
| Ընդամէնը՝ | 1523 | 435 | 30 | 1988 |

---

*Ծննդաբերութիւն.*

Ախալքալաքի ամբողջ գաւառում 1886—1890 թուականներին եղել են ծնունդներ՝

| | | |
|---|---|---|
| 1886 թուին | | 3116 |
| 1887 ,, | | 3481 |
| 1888 ,, | | 3352 |
| 1889 ,, | | 3383 |
| 1890 ,, | | 3291 |
| Ուրեմն՝ | Ընդամէնը՝ | 16,623 |
| | Միջին թուով | 3,324 |

Հետևապէս գաւառի ընդհանուր ծննդաբերութիւնն հասնում է 4,63 կամ իւրաքանչիւր հազար բնակչին գալիս է 46,3 ծնունդ։ Ուրեմն այս գաւառի ծննդաբերութիւնը 8,8 բարձր է իր, Թիֆլիսեան, նահանգի ընդհանուր ծննդաբերութիւնից (57,5), ինչպէս նաև նոյն նահանգի միւս գաւառներից։

Ըստ ազգութեան ծնունդների թիւը, Նադեժդինի 1875—80 թ. հետազօտութեան համաձայն այսպէս է դասակարգւում։

| | Բնակիչների թիւը | Ծնուել է 5 տա-րում. | Ծնուել է մի տա-րում. | Մի ծնունդ ընկնում է քանի բնակչի | 1000 բնակչից ծնուել են. |
|---|---|---|---|---|---|
| Հայեր | 29919 | 7382 | 1476 | 20,2 | 49,1 |
| Վրացիներ | 3532 | 683 | 136 | 26,3 | 38,5 |
| Մահմեդական. | 6267 | 1089 | 218 | 28,5 | 35,1 |
| Ընդամէնը՝ | 39718 | 9155 | 1831 | 21,7 | 46,1 |

Հայերից ծնւում են 49,1—վրացիներից հազար հոգուն 10,6 և մահմեդականներից 13,8 աւելի և հազար հոգուն 6 աւելի ամբողջ նահանգում ծնուած հայերից (42,8)։ Վրացիների և Մահմեդականների այս գաւառի ծնունդների թիւը 38,5 և 35,3—նոյնպէս բարձր է ամբողջ նահանգի միևնոյն ազգերի ծննդաբերութեան թուից—36,8—31,8 իւրաքանչիւր հազար բնակչին[1])։

[1])Надеждинъ Описаніе Тифлисской губерніи.

*Կանանց թուի համեմատութեամբ ընդհանուր արգասաւորութիւնը երեւում է հետեւեալ աղիւսակից.*

| | Կանանց թիւը. | Ծնունդների տարեկան միջին թիւը. | Մի ծնունդ ընկնում է կանանց | 1000 կանանցից ծնել են. |
|---|---|---|---|---|
| Հայեր | 14036 | 1476 | 9,5 | 105 |
| Վրացիներ | 1666 | 136 | 12,3 | 81 |
| Մահմեդական | 3164 | 218 | 14,3 | 69 |
| Ընդամէնը՝ | 18866 | 1831 | 10,1 | 97 |

*Ախալքալաքի գաւառում արգասաւորութիւնը—հազար հոգուն* 97 *ծնունդ—նրա նահանգի ընդհանուր արգասաւորութիւնից* (80) *բարձր է։*

*Հայերի արգասաւորութիւնը* (105) *բարձր է ինչպէս գաւառի միւս բոլոր ազգութիւնների, այնպէս և նրա ամբողջ նահանգի հայերի ընդհանուր արգասաւորութիւնից* (89 *հազար կնոջ*)։

*Ամիսների համեմատ ծնունդների թիւը* 1875—1880 *թուականներում այսպէս է դասակարգւում* [1])։

| Ծնունդ | Յղութ. | Հայեր. | | Վրացիներ | | Մահմեդ. | | Բոլորը. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. |
| Յունվ. | Ապրիլ | 378 | 232 | 34 | 29 | 50 | 46 | 462 | 407 |
| Փետր. | Մայիս | 334 | 315 | 34 | 32 | 55 | 48 | 423 | 395 |
| Մարտ | Յունիս | 330 | 985 | 30 | 32 | 58 | 57 | 418 | 374 |
| Ապրիլ | Յուլիս | 279 | 239 | 27 | 29 | 56 | 54 | 362 | 322 |
| Մայիս | Օգոստ. | 295 | 251 | 36 | 26 | 54 | 44 | 385 | 321 |
| Յունիս | Սեպտ. | 301 | 259 | 21 | 23 | 44 | 43 | 866 | 325 |
| Յուլիս | Հոկտ. | 314 | 275 | 21 | 26 | 46 | 36 | 381 | 337 |
| Օգոստ. | Նոյեմ. | 345 | 301 | 23 | 26 | 52 | 40 | 420 | 367 |
| Սեպտ. | Դեկտ. | 337 | 322 | 23 | 26 | 35 | 32 | 395 | 380 |
| Հոկտ. | Յունվ. | 344 | 323 | 32 | 22 | 51 | 38 | 521 | 383 |
| Նոյեմ. | Փետր. | 354 | 311 | 29 | 22 | 48 | 41 | 431 | 399 |
| Դեկտ. | Մարտ | 299 | 340 | 42 | 38 | 42 | 19 | 385 | 391 |
| Բոլորը | | 3910 | 3473 | 352 | 331 | 591 | 498 | 4833 | 4302 |

[1]) Пантюховъ, Ахалкалакскій уѣздъ.

*Այս աղիւսակից հետեւում է, որ ծնունդների թիւն իւր մաքսիմումին հասնում է Յունուարին (յղութիւնը պատահում է ապրիլին, երբ գիւղացիներն արդէն ցանած են լինում արտերը), իսկ մինիմումին իջնում է յունիսին (յղութիւնը պատահում է սեպտեմբերին, գիւղացիների աշխատանքի ամենասաստիկ ժամանակ)։*

*Բացի սրանից, այս աղիւսակից հետեւում է, որ հարիւր արու երեխաների վերայ ծնւում են* 89 *աղջիկ. ամենաքիչը՝ մահմեդական վրացիների*—84 *և ամենաշատը՝ յունադաւան վրացիների մէջ*—94։

## *Ննջեցեալներ.*

*Ախալքալաքի գաւառում հինգ տարիների ընթացքում եղել են հետեւեալ թւով ննջեցեալներ.*

| | | Արական | Իգական | Միասին |
|---|---|---|---|---|
| 1886 թուին | | 941 | 796 | 1637 |
| 1887 ,, | | 842 | 799 | 1641 |
| 1888 ,, | | 991 | 753 | 1744 |
| 1889 ,, | | 1300 | 1273 | 2573 |
| 1890 ,, | | 952 | 767 | 1719 |
| Ուրեմն | Ընդամէնը՝ | 5025 | 4388 | 9314 |
| | Միջին թիւ. | 1005 | 877 | 1863 |

*Հետեւապէս և իւրաքանչիւր հազար բնակչից մեռնում է* 28,3 *մարդ։ Հարիւր տղամարդի վերայ մեռնում են* 89 *կին։*

*Վերոյիշեալ թուերն ես ստացել եմ տեղական ոստիկանատնից, իսկ ազգութիւնների, ամիսների և հասակի համեմատ ննջեցեալների թիւն այնտեղ չգտնելով, ես ստիպուած քաղում եմ Պանտուխովի յիշած Նադեժդինի հետազօտութիւնից* [1]։

*Այսպէս՝ հինգ,* 1875—1879 *թ. ընթացքում ամիսների և ազգութիւնների համեմատ եղել են ննջեցեալներ.*

| | Հայեր | | Վրացիներ | | Մահմեդ. | | Բոլորը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. |
| Յունուար | 267 | 234 | 17 | 11 | 77 | 73 | 361 | 318 |
| Փետրուար | 208 | 180 | 9 | 11 | 67 | 44 | 284 | 235 |
| Մարտ | 262 | 217 | 12 | 15 | 93 | 59 | 367 | 291 |
| Ապրիլ | 263 | 231 | 9 | 8 | 38 | 38 | 310 | 277 |
| Մայիս | 232 | 231 | 15 | 10 | 26 | 32 | 273 | 274 |

[1]) **Пантюховъ Ахалкалакскій уѣздъ медико-антропологическій очеркъ, Тифлисъ 1892.**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յունիս | 196 | 186 | 16 | 18 | 28 | 45 | 240 | 249 |
| Յուլիս | 209 | 198 | 11 | 9 | 22 | 42 | 242 | 247 |
| Օգոստոս | 267 | 266 | 7 | 20 | 54 | 41 | 328 | 327 |
| Սեպտեմբեր | 217 | 202 | 7 | 4 | 31 | 32 | 255 | 238 |
| Հոկտեմբեր | 225 | 181 | 6 | 11 | 34 | 31 | 265 | 223 |
| Նոյեմբեր | 193 | 178 | 5 | 11 | 28 | 31 | 226 | 220 |
| Դեկտեմբեր | 160 | 135 | 11 | 9 | 19 | 31 | 190 | 175 |
| Բոլորը | 2699 | 2439 | 125 | 137 | 517 | 499 | 3341 | 3075 |
| Երկու սեռից | 5138 | | 262 | | 1016 | | 6416 | |

Ամենից շատ մահ պատահում է յունուարին—10,6% և մարտին—10,5%, իսկ ամենից քիչ՝ նոյեմբերին—7% և դեկտեմբերին—5.7% տարեկան միջին թւով։ Ուշադրութեան արժանի է, որ մայիս, յունիս, յուլիս և օգոստոս ամիսներին, երբ կանանց տնային աշխատանքների վրայ աւելանում է և դաշտային աշխատանքները, կին ննջեցեալների թիւը կամ հաւասարում և կամ անցնում է տղամարդ ննջեցեալների թւից։ Հայ և մահմեդական ննջեցեալների թւերն ըստ ամիսների համապատասխանում են, իսկ յունադաւան վրացիների ննջեցեալների թիւը, գուցէ, պակաս բարձրութեան և առողջարար տեղերում բնակուելու պատճառով, տարբերւում է ընդհանուրից և ամենաբարձրը լինում է յունիսին 13% տարեկան, միջին թւով։

Ըստ հասակի և ըստ ազգութիւնների հինգ տարւայ ընթացքում եղել են ննջեցեալներ։

| Հասակը | Հայեր. | | Վրացիներ. | | Մահմեդ. | | Բոլորը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ար. | իգ. | ար. | իգ. | ար. | իգ. | ար. | իգ. |
| մինչև 1 տար. | 518 | 433 | 7 | 6 | 63 | 56 | 588 | 495 |
| 1—2 տարեկ. | 525 | 467 | 23 | 18 | 67 | 73 | 615 | 658 |
| 2—3 | 375 | 336 | 18 | 22 | 46 | 42 | 439 | 400 |
| 3—4 | 190 | 195 | 9 | 12 | 27 | 32 | 226 | 239 |
| 4—5 | 150 | 124 | 2 | 5 | 20 | 25 | 172 | 154 |
| 5—10 | 262 | 194 | 16 | 13 | 46 | 53 | 324 | 260 |
| 10—15 | 84 | 66 | 8 | 9 | 26 | 25 | 118 | 100 |
| 15—20 | 50 | 47 | 5 | 5 | 19 | 8 | 74 | 60 |
| 20—25 | 49 | 44 | 4 | 2 | 15 | 25 | 68 | 71 |
| 25—30 | 48 | 70 | 7 | 5 | 20 | 17 | 75 | 92 |
| 30—35 | 49 | 74 | 3 | 7 | 12 | 25 | 64 | 106 |
| 35—40 | 41 | 58 | 1 | 3 | 17 | 22 | 59 | 83 |
| 40—45 | 41 | 62 | 4 | 5 | 27 | 12 | 72 | 79 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 45—50 | 36 | 37 | 3 | 3 | 15 | 9 | 54 | 49 |
| 50—55 | 46 | 37 | — | 8 | 19 | 10 | 63 | 55 |
| 55—60 | 20 | 17 | 3 | 2 | 8 | 15 | 31 | 34 |
| 60—65 | 43 | 35 | 4 | 4 | 15 | 16 | 62 | 55 |
| 65—70 | 32 | 17 | 3 | 3 | 14 | 9 | 49 | 29 |
| 70—75 | 51 | 47 | 4 | 4 | 16 | 8 | 71 | 59 |
| 75—80 | 29 | 20 | 1 | — | 7 | 8 | 37 | 28 |
| 80—85 | 27 | 30 | — | 1 | 14 | 4 | 41 | 35 |
| 85—90 | 10 | 9 | — | — | 1 | 3 | 11 | 12 |
| 90—95 | 14 | 8 | — | — | 1 | — | 14 | 8 |
| 95—100 | 4 | 8 | — | — | 1 | — | 6 | 8 |
| 100 աւելի | 5 | 4 | — | — | 1 | 2 | 6 | 6 |
| Ընդամէնը | 2699 | 2439 | 125 | 137 | 517 | 499 | 3341 | 3075 |

*Հայերից 25—50 տարեկան կանայք աւելի են մեռել քան թէ տղամարդիկ, այսպէս՝ 100 տղամարդու վրայ մեռել են կանայք՝ 25—30 տ.—144, 35—40 տ.—140, իսկ բոլորը՝ մինչև 50 տար.—124. Վրացիների մէջ տղամարդկանց համեմատութեամբ կանայք ամենից շատ մեռնում են 35—40 տարեկան հասակում — հարիւր տղամարդի վրայ 160 կին, իսկ Մահմետականների մէջ 35—40 տ. հասակում. հարիւրին՝ 164 կին։ Ծննդաբերութեան հասակում կանայք անհամեմատ աւելի են մեռնում։*

*Ըստ հասակի և ազգութիւնների բոլոր ննջեցեալներից իւրաքանչիւր հազարին ընկնում են.*

| | Հայեր. | Վրացիներ. | Մահմետականներ. |
|---|---|---|---|
| Մինչև 1 տար. | 186 | 49 | 115 |
| 1—2 » | 195 | 157 | 136 |
| 2—3 » | 138 | 155 | 84 |
| 3—4 » | 74 | 79 | 56 |
| 4—5 » | 53 | 27 | 45 |
| 5—10 » | 89 | 111 | 99 |
| 10—15 » | 29 | 65 | 51 |
| 15—20 » | 19 | 39 | 27 |
| 20—25 » | 18 | 23 | 40 |
| 25—30 » | 23 | 45 | 37 |
| 30—40 » | 44 | 52 | 76 |
| 40—50 » | 34 | 57 | 63 |
| 50—60 » | 23 | 49 | 52 |
| 60—70 » | 25 | 52 | 54 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 70—80 | » | 29 | 35 | 39 |
| 80—90 | » | 15 | 4 | 21 |
| 90—100 | » | 6 | — | 2 |
| 100 աւելի | » | 1 | — | 3 |

Մինչև մի տարեկան երեխաներ վրացիների մէջ մեռել են երկու անգամ աւելի քիչ՝ քան թէ մահմետականների և երեք անգամ աւելի քիչ քան թէ հայերի մէջ. իսկ մինչև հինգ տարեկան երեխաների մահուան տոկոսը հայերի մէջ է 64, վրացիների մէջ՝ 46, մահմետականների մէջ 44. իսկ ծննդից մինչև տաս տարեկան երեխաներինը՝ հայերի մէջ 73, վրացիների մէջ 57, մահմետականների մէջ 53։

Ախալքալաքի գաւառում մանուկների մահն աւելի սաստիկ է ոչ միայն Թիֆլիսեան նահանգի բոլոր գաւառներինից, այլ և Ռուսաստանի մանուկների մահից։ Այսպէս՝ ըստ հասակի բոլոր ննջեցեալներից իւրաքանչիւր հարիւրին ընկնում է.

| | 0-10 տ. | 10-20 տ. | 20-50 տ. | 50-70 տ. | 70-100 տ. |
|---|---|---|---|---|---|
| Ախալքալաք քաղաք | 70 | 2 | 13 | 5 | 10 |
| Ախալքալաքի գաւառ. | 69 | 5 | 13 | 6 | 5 |
| Ախալցխու գաւառ. | 48 | 6 | 25 | 12 | 7 |
| Տիօնէտու գաւառ. | 27 | 9 | 33 | 17 | 12 |
| Թիֆլիս. նահանգ | 41 | 8 | 29 | 14 | 7 |
| Ռուսաստան | 62 | 4 | 15 | 12 | 6 |

Ծնունդների թիւը համեմատելով ննջեցեալների թուի հետ, կըստանանք ազգաբնակութեան տարեկան միջին աճումը.

| | ծնել են. | մեռել են. | Տարեկան աւելացել են. | 1000 բնակ. աւելաց. են. |
|---|---|---|---|---|
| Հայեր . | 1476 | 1027 | 449 | 15 |
| Վրացիներ | 136 | 52 | 84 | 23 |
| Մահմետական | 218 | 203 | 15 | 2 |
| Բոլորը | 1831 | 1282 | 549 | 14 |

Ազգաբնակութեան ընդհանուր աճումը գաւառում հասնում է հազարին 14, գրեթէ հաւասար նահանգի միջին աճման (15). ըստ ազգութիւնների, հայերի աճումը հաւասար է նոյն նահանգի հայերի աճման, վրացիների աճումը — 23 — բարձր է նոյն նահանգի վրացիների աճումից (12), իսկ մահմետականների աճումը — 2 — պակաս է նոյն նահանգի նրանց աճումից (4)։ Որովհետև Վրացիների աճման թուերը շատ քիչ են, ուստի սրանք չեն կարող արտայայտել ամբողջ գաւառի վրացիների աճումը, բայց հայերի աճումը, որ համարեա ութ անգամ աւելի է մահմետականների աճումից, ցոյց է տալիս այս վերջինների՝ կենսաբանական և առողջապահական պայմանների սաստիկ խղճալի դրութիւնը։